«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը, համագործակցային ուսուցման մեթոդները**

<<ՀՀ Լոռու մարզի Ձրաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի անգլերենի ուսուցիչ - Նարինե Ավետիսյան

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **3**

1. Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը.... **5**

2. Համագործակցային ուսուցման մեթոդները..... **7**

3. Համագործակցային ուսուցման առավելությունները ----------**13**

Եզրակացություն **14**

Գրականության ցանկ----------**15**

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Ուայթսոն

Ներածություն

Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները:

Թեմայի արդիականությունը. Մանկավարժական տեխնոլոգիան այսօր առավելապես ընկալվում է որպես ուսումնական աշխատանքի ճշգրիտ նախագծում և այդ նախագծի հստակ կիրառում, որի արդյունքում ամպայմանորեն հասանելի են դառնում նախագծված արդյունքները: Մանկավարժական տեխնոլոգիաները ներառական կրթության համար անհրաժեշտ են, որպեսզի ուսուցիչը կարողանա նախագծի և մշակի ուսուցման և դաստիարակության նպատակները, ուսուցման ընթացքում կարողանա կիրառի դիդակտիկական, տեխնիկական նյութեր, քանի որ ինչպես հայտնի է ուսուցման հատուկ կարիք ունեցող երեխաների համար նյութի յուրացումը առավել հեշտ է այն դեպքում, երբ դրանք զուգակցվում են ուսուցանվող նյութին համապատասղան դիդակտիկական նյութերով, առարկաներով, այսինքն՝ նման կերպ տվյալ երեխաների համար նյութը դառնում է առավել ակնհայտ, տեսանելի, շոշափելի: Սակայն չի կարելի ասել, որ դա անհրաժեշտ է միայն կրթության հատուկ կարիք ունեցող երեխաներին, նորմալ զարգացում ունեցող երեխաների համար նույնպես մատուցվող նյութը առավել դյուրին է լինում ընկալել, երբ ուսուցիչը ուսուցման

ընթացքում օգտագործում է դիդակտիկ, տեխնիկական, ինչպես նաև համակարգչային միջոցներ: Մեր ուսումնասիրության նպատակն է քննել համագործակցային մեթոդների կիրառման հոգեբանամանկավարժական առանձնահատկություններն ուսումնասիրման ընթացքում: Նշված նպատակից բխում են հետազոտության հետևյալ խնդիրները.

ա. բնութագրել ուսուցման նորագույն մեթոդներն անձնակենտրոն ուսուցման համակարգում,

բ. հիմնավորել համագործակցային մեթոդների կիրառման անհրաժեշտությունը,

գ. քննել սովորողի դրդապատճառների, պահանջմունքների, հուզազգայական ոլորտի հաշվառումը համագործակցային ուսուցման գործընթացում

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնալու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում: Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:

1.Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը

Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ.

1. Խմբի անդամների գիտակցված ստեղծագործական համագործակցություն:

2. Մասնակիցների ակտիվ ստեղծագործական հարաբերություններ:

3.Համատեղ աշխատանքին գիտակցական մասնակցություն և պատասխանատվություն՝ ընդհանուր գործի հաջողության համար:

4. Զույգով կամ փոքր խմբով աշխատելու հմտություններ:

5. Արդյունավետության բարձրացման նպատակով խմբի ներսում աշխատանքի ընթացքի մասին քննարկումների պարբերաբար կազմակերպում: Համագործակցային ուսուցման ժամանակ երեխաների խմբերը միասին աշխատում են մեկ դասի կամ մի քանի շաբաթվա ընթացքում՝ միասին ինչ-որ նոր բան իմանալու կամ կոնկրետ հանձնարարություն կատարելու համար: Այս մեթոդն արդյունավետ է շատ դեպքերում՝ նոր նյութի հետազոտության, ինչ-որ խնդրի լուծման, նոր բան ստեղծելու ժամանակ: Նախքան համագործակցային մեթոդով դաս կազմակերպելը՝ ուսուցիչը պետք է որոշի, թե որն է իր դերը: Նա պետք է գիտակցի, որ այս դեպքում ուսուցման գլխավոր խնդիրը սովորողներին կոնկրետ գիտելիքներ հաղորդելը չէ, այլ նրանց հետ միասին այդ գիտելիքները ձեռք բերելը:Համագործակցային դասի արդյունավետությունը մեծապես կախված է այն տարածքից, որտեղ այն կազմակերպվում է: Դասարանն անհրաժեշտ է դասավորել այնպես, որ համագործակցային խմբի անդամները հնարավորություն ունենան նստելու դեմ դիմաց, խոսելիս նայելու միմյանց աչքերի մեջ և մյուս խմբերին չխանգարելով՝ միմյանց հետ ազատ փոխանակելու մտքեր, փաստաթղթեր, նյութեր: Սենյակի դասավորությունը պետք է ուսուցչին հնարավորություն ընձեռի ազատ տեղաշարժվելու դասարանում, որպեսզի ցանկացած պահի կարողանա մոտենալ խմբերից յուրաքանչյուրին: Ուսումնական նյութի ընտրությունը կախված է խմբերին հանձնարարված աշխատանքի բնույթից: Սկզբում ուսուցիչը որոշում է, թե ինչ նյութեր պետք է ուսումնասիրվեն, ապա դրանք բաժանում է խմբերին, որպեսզի բոլոր աշակերտները հնարավորություն ունենան ծանոթանալու դրանց: Եթե խումբը կազմված է բարձրդասարանցիներից, ովքեր ունեն համատեղ աշխատելու հմտություններ, ուսուցիչը կարող է լրացուցիչ մեկնաբանություններ չանել, իսկ նոր կազմավորված խմբերում, որոնց անդամները նոր-նոր են սովորում համագործակցել միմյանց հետ, ուսուցիչը նյութերը բաժանելուց առաջ պետք է հիշեցնի, որ առաջադրանքը պետք է կատարել միայն համատեղ ջանքերով՝ համագործակցելով միմյանց

հետ, և այն իրադրությունը, որում հայտնվել են իրենք, կարելի է բնորոշել այսպիսի ձևակերպմամբ՝ <>: Որպեսզի աշակերտները զգան առաջադրանքի կատարման ժամանակ իրենց փոխկախվածությունը միմյանցից, ուսուցիչը պետք է հոգ տանի ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու մասին: Դրան կարելի է հասնել խմբի անդամներից յուրաքանչյուրին որոշակի դեր /հանձնարարություն/ տալով: Աշակերտը կարող է կատարել վերլուծաբանի դեր, որը եզրահանգումներ է կատարում նյութի վերաբերյալ՝ հիմնվելով խմբային քննարկման արդյունքների վրա, կարող է լինել խմբի գործողությունները նրա բոլոր անդամների համար հասկանալի դարձնելու գործի պատասխանատու, տեղեկատվության հավաստիության և որոշումների հիմնավորվածության պատասխանատու, արխիվ ստեղծելու նպատակով խմբի գործողությունները մատյանում արձանագրող և այլն: Խմբում կարող է լինել աշխատանքների կազմակերպիչ: Համագործակցային խմբի անդամների միջև այնպիսի դերերի բաշխումը, որոնց կատարումը պահանջում է սերտ համագործակցություն, նպաստում է սովորողների մոտ սոցիալական հմտությունների և համատեղ աշխատանքի ժամանակ փոխկախվածության զգացումի զարգացմանը2: Համագործակցային խմբի անդամների՝ վերը թվարկված դերերի մեջ ամենակարևորը խմբի գործողությունները նրա բոլոր անդամների համար հասկանալի դարձնելու գործի պատասխանատուիր դերն է: Այս դերը կատարող աշակերտի խնդիրն է ժամանակ առ ժամանակ ստուգել, թե արդյոք բոլորն են ըմբռնել կատարվող գործողությունների նպատակը և դրանց արդյունքում հավաքված նյութերի իմաստը: Եվ եթե ուսուցիչը հնարավորություն չունի դասարանում շարունակ հետևելու, թե արդյոք բոլոր աշակերտներն են հասկացել թեմային առնչվող այս կամ այն հարցը, ապա խմբի ներսում դա միանգամայն հնարավոր է, եթե խմբի անդամներից մեկը կատարում է խմբի գործողությունները նրա բոլոր անդամների համար հասկանալի դարձնելու գործի պատասխանատուի դերը: Դասի սկզբում ուսուցիչը պետք է հանգամանորեն ներկայացնի դասի ակադեմիական նպատակները, որպեսզի աշակերտները հստակ պատկերացնեն, թե իրենցից ինչ է պահանջվում: Առաջադրանքը ճիշտ կատարելու համար նրանք պետք է ստանան պարզ և հստակ հրահանգներ: Համագործակցային ուսուցման կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ եթե խմբի անդամներից որևէ մեկը չի հասկացել առաջադրանքը, ապա ուսուցչին դիմելուց առաջ նա պետք է այդ հարցով դիմի իր ընկերներին: Համագործակցային ուսուցումը

ժամանակակից կրթության ամենից շատ ուսումնասիրված ոլորտներից է: Այս մոտեցումն առավելագույնս է համապատասխանում ուսուցման փոփոխված նպատակներին, որի անտեսմամբ հնարավոր չէ լուծել այն բազում խնդիրները, որոնք այսօր ծառացել են հասարակության առջև: Համագործակցային ուսուցման հաջողությունը հիմնականում պայմանավորվում է այն հանգամանքով, թե ինչպիսի գիտելիքներ, հմտություններ ու փորձ ունեն ուսուցիչները: Ավանդական դպրոցի ուսուցչի համար բոլորովին էլ հեշտ չէ հրաժարվել մինչ այժմ կիրառած իր աշխատաձևից, ուսուցչակենտրոն մեթոդներից և միանգամից անցում կատարել աշակերտակենտրոն մեթոդներին: Մեթոդական առումով համագործակցությունը օգնում է հասկանալ, թե ինչպես է զարգանում ճանաչողությունը՝ ուսուցչի վարպետության և աշակերտի հետ համագործակցության միջոցով: Այսինքն՝ այսօր մանկավարժության առաջնահերթ խնդիրն է ձևավորված նպատակների իրականացումն ապահովող ուսուցման նորարարական մեթոդների որոնումը:

2. Համագործակցային ուսուցման մեթոդները

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դրանք են ,,Աշակերտների թիմային առաջադիմություն,,,,Խճանկար,, ,,Շրջվիր դեպի զույգդ,, ,,Պրիզմա,, ,,Խմբային հետազոտություն,, , Շրջագայություն պատկերասրահում,, և այլն : Ուսուցման փոխներգործուն մեթոդները նպատակ ունեն զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները, որովհետև ըստ ամերիկացի տեսաբան Մ. Լիփմանի, «Մտածողությունն առանց զգացմունքի անհետաքրքիր է»: Մի շարք մեթոդներում և հնարներում սովորողներից պահանջվում է հարցերին պատասխանել առանց երկար մտածելու, առաջին տպավորությամբ, որը կարող է տպավորություն ստեղծել, թե մտածելը չի խրախուսվում (օրինակ «Պրիզմա» մեթոդում) : Սակայն, իրականում այն նպատակ է հետապնդում քննարկումների ու եզրակացությունների համար հիմնային նյութ հավաքել, արժևորում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումը, այլ՝ դրա կառուցումը: Այս մոտեցումը աշակերտներին հնարավորություն է տալիս սովորել սեփական սխալների վրա, նաև ուսուցչին հնարավորություն է տալիս որոշելու սովորողի ելակետային մակարդակը:

Ուսուցման մեթոդների և մեթոդական հնարների արդյունավետությունը մեծապես կախված է երկխոսության որակից: Համագործակցային ուսուցման մեթոդներով աշխատող ուսուցիչը սոսկ տեղեկատվություն տվող չէ, այլ նաև ուսուցման գործընթացի կազմակերպիչ, ինչը պահանջում է բացահայտել առկա խնդիրները և ուսումնառության գործընթացը հարմարեցնել սովորողների հնարավորություններին: Ուսուցիչները պետք է քաջալերեն սեփական խնդիրներն ինքնուրույն լուծելու աշակերտների ջանքերը: Համագործակցային ուսումնառության բոլոր մեթոդների համար էլ ընդհանուր է հետևյալ գաղափարը. աշակերտները համագործակցում են միասին սովորելու նպատակով և պատասխանատու են ինչպես իրենց, այնպես էլ թիմակիցների ուսումնառության համար: Նորարարական մեթոդների արդյունավետությունը հիմնականում կախված է այն բանից, թե խմբի անդամների միջև կայացե±լ է արդյոք համագործակցություն: Ուսուցման նոր մեթոդների մասին հիմնավոր պատկերացում կազմելու համար հանգամանորեն ներկայացնենք նրանցից մի քանիսը:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ Այս մեթոդի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ5: Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկն ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի 2 խումբ: Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տրված մասի վրա և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով պատկերասրահ: Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը, կազմում 4 նոր խումբ՝ ըստ իրենց համարների: Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է կարողանա տեսնել իր խմբի բոլոր անդամներին, ինչպես արված է ստորև նկարում: Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Սրանից հետո բոլոր հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և

վերլուծելով առաջացած հարցերը:

ԽՃԱՆԿԱՐ Այս մեթոդի կիրառության ժամանակ աշակերտները խորհրդուրդ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, ասպեկտի, հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Խճանկար-առաջադրանքի միջոցով աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ, նույն թեմայի վերաբերյալ այլևայլ կարճ պատմվածքներ կամ նույն հեղինակից այլ պատմվածքներ կարդալ: Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել ուշադրության արժանի տարբեր ոլորտներ, օրինակ՝ օզոնի շերտի քայքայման ազդեցությունը բույս-սերի վրա, եղանակը, ջրային պաշարները, մաշկի քաղցկեղի տարածումը: Պատմութ-յան դասի ժամանակ կարելի է հետազոտել «Նոր մոտեցման» ¥New Deal Initiatives¤ պատմությունը , որն առնչվում էր հասարակական օգնության, գյուղատնտեսական ծրագրերի կամ արդյունաբերական քաղաքականության հետ:

ԳՈՒՍ Այս մեթոդը ենթադրում է օգտագործել գրաֆիկական կազմակերպիչ, որը 3 սյունակից բաղկացած մի աղյուսակ է և կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը կարդալու ընթացքում: Աշակերտներին պետք է հարցնել, թե ինչ գիտեն դասի թեմայի մասին և նրանց ասածները գրի առնել աղյուսակի առաջին սյունակի մեջ, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն և դրանք գրանցել 2-րդ սյունակի մեջ: Պետք է օգնել աշակերտներին՝ դասակարգելու իրենց գիտելիքներն ու հարցերը և կազմել մի առանձին ցուցակ, որին կանվանեն «Տեղեկատվության ինչ տեսակներից ենք ակնկալում օգտվել»: Պետք է աշակերտներին առաջարկել կարդալ պատմությունը կամ ընտրված հատվածը և գտնել այն տեղեկությունները, որոնք պատասխանում են իրենց նախնական հարցերին կամ լրացնում են դրանք՝ ընդլայնելով թեմայի մասին պատկերացումները: Իսկ երբ աշակերտները վերջացնեն կարդալը, պետք է նրանց ուշադրությունը հրավիրել 3-րդ սյունակի վրա: Պետք է թվարկեն թեմային վերաբերող ներ տեղեկությունները, որոնք հայտնաբերել են կարդալու ընթացքում և գրի առնեն 3-րդ սյունակում: Երբ լրացվում է ԳՈՒՍ-ի աղյուսակը, ամփոփել ամբողջ դասարանի կամ առանձին աշակերտների կողմից դասակարգված ողջ տեղեկատվությունը: Այս մեթոդի առավելությայն այն է, որ այն ուսուցիչներին թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների նախնական գիտելիք-ների մասին: Աշակերտների համար որոշակի համակարգ է ապահովվում, որի շրջա-նակներում նրանք կարողանում են կարդացվելիք նյութի մասին ենթադրություններ անել: Զարգանում են աշակերտների ինքնահարցման,

ինքնավերլուծության ¥self-questioning¤ հմտությունները: Նրանք սովորում են ավելի ակտիվորեն կարդալ՝ թեմային առնչվող իրենց հարցերին պատասխաններ գտնելու համար:

ՊՐԻԶՄԱ Սա շատ ակտիվ մեթոդ է: Խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Այն կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հոտաքրքրությունը: Մեթոդի կիրառումն ապահովում է դասի հաջող մեկնարկը: կիրառումն անցնում է շատ արագ և աշխույժ: Մեթոդն արդյունավետ է այն ժամանակ, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: Խմբային քննարկումների նման ձևով կազմակերպումն ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ Իմաստի ընկալման փուլն արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է աշակերտին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: ***Գծապատկեր 1***

V	--	+	?	!

Այս մեթոդի էությունն է, որ կարդալիս արվում է փոխգործուն գրառումներ հետևյալ նշաններով. V գիտեմ, --- իմ իմացածին հակասում է, + նոր տեղեկություն է, ? անհասկանալի է, շփոթեցնող, ! հետաքրքիր է, կարելի է քննարկել7 : Ընթերցումից ստացված տեղեկությունը դասակարգելու համար աշակերտները կազմում են կատարած նշումների իրենց անհատական աղյուսակը հետևյալ ձևով. Այս գրառումներն արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Կարդալու ընթացքում արված նշումները ծառայում են որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար: **/** ***Գծապատկեր 1*** **/**

ՎԵՆԻ ԴԻԱԳՐԱՄ Այն կառուցվում է 2 շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: **/** ***Գծապատկեր 2*** **/**

Գծապատկեր 2



2 **ՄՏԱԳՐՈՒՄ ԿԱՄ ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ** Մինչ դասանյութին անցնելը, ուսուցիչը որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Հետո մտքերը գրի են առնվում գրատախտակին: Յուրաքանչյուր միտք խրախուսվում է: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին որևէ քննադատություն անել կամ գնահատական տալ: Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց, անհավանական, անհեթեթ և հակասական գաղափարներն արտահայտելու մտավախություն չի ունենում:

Գծապատկեր 3



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆԻՎ Սրա նպատակը խմբի աշխատանքի գնահատումն է: Աշակերտները պետք է իրենց խմբի աշխատանքի համար որոշեն գնհատման չափանիշներ: Դրանց թիվը կարող է տարբեր լինել, սակայն չպետք է գերազանցեն 10-ը: Գրատախտակին պետք է գրանցեն բոլոր չափանիշները՝ բացարելով կրկնությունները: Չափանիշները համարակալվում են: Յուրաքանչյուր խումբ գծանկարում է մի անիվ՝ անվաճաղերի այնքան թվթվ, որքան որ չափանիշներ են ընտրվել: Դրսի կողմից անցաճաղերի վրա պետք է գրվեն չափանիշների համարները: Անվաճաղերը ներկայացնում են մի սանդղակ, որի կենտրոնում ամենացածրը 0 կետնէ, իսկ շրջանագծի վրա ամենաբարձրը՝ 10 միավոր նշանակող կետը: Անհատները պետք է գնահատեն խմբի աշխատանքը՝ ըստ զանազան չափանիշների և յուրաքանչյուր չափանիշի հատկացնեն միավորներ՝ անվաճաղի վրա նշում կատարելով9: Երբ պետք է իմանալ դասարանի գնահատականը, ապա գնահատումը կարելի է կատարել նույն անիվի վրա: Այս դեպքում յուրաքանչյուր աշակերտ անվաճաղի վրա իր նիշն է դնում: Այս վարժությունը դասընթացը, ուսուցչին, խմբի աշխատանքը և այլն գնահատելու արդյունավետ միջոց է: Սա ճկուն միջոցներից է, միևնույն հասկացության, խնդրի 2 կողմերը համեմատելու համար: Այս աղյուսակը կազմված է երկու բաժնից, ուր գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակառակ որակները, դրական կամ բացասական կողմերը, բերված են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Այս աղյուսակը կատելի է արդյունավետ օգտագործել դասի տարբեր փուլերում: **/** ***Գծապատկեր 3*** **/**

ՔԱՌԱԲԱԺԱՆ Հարմար է կիրառել ցանկացած տեքստի հետ աշխատելիս, մեծ և փոքր խմբերով աշխատելիս կամ անհատական աշխատելիս: Անհրաժեշտ է մաքուր թուղթ **կամ** գրատախտակ, որը պետք է բաժանել 4 մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից յուրաքանչյուրում: Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ողջ թիմին: Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է նաև ամբողջ դասարանին: Այսպիսով, համագործակցային ուսուցման սկզբունքները հնարավորություն են տալիս ստեղծել դրական փոխկապվածություն խմբի անդամների միջև: Նման պարագայում աշակերտները գիտակցում են, որ իրենք կարող են իրենց նպատակին հասնել միայն այն դեպքում, երբ խմբի անդամները կհասնեն իրենց նպատակներին: Սա դրական փոխկապվածություն է և համագործակցային ուսուցման առավելությունը:

3.Համագործակցային ուսուցման առավելությունները

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը:

Դիագրամ 1 / https://www.researchgate.net /



Եզրակացություն

Կրթության համակարգում այսօր ամրագրվում է մարդաբանական, հումանիստական մոտեցումը, որի հիմքում ընկած է անձնակենտրոն հարացույցը: Հենց հումանիստական մոտեցումն է ուրվագծում կրթական համակարգի զարգացման գլխավոր ռազմավարական ուղղությունները: 21-րդ դարում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության համակարգը վերաիմաստավորել է իր գերակայությունները՝ շեշտը դնելով մարդկային գործոնի և անձի զարգացման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք է դիտարկվում ազատ, կրթված, զարգացած անհատը, որն ընդունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհում, լինել մրցունակ, ինտեգրվել համաշխարհային հանրության մեջ: Արձագանքելով արդի հասարակության զարգացման խնդիրներին, բարձրագույն կրթությունը պետք է առաջ մղի սոցիալական, գիտական, տնտեսական և մշակութային ոլորտներն ընդգրկող հիմնախնդիրների ըմբռնումը, ինչպես նաև բարելավի դրանք լուծելու մարդկանց կարողությունները: Ուսուցման համագործակցային մեթոդների կիրառումը նպաստում է աշակերտների միջև համագործակցային հմտությունների ձևավորմանը՝ հաշվի առնելով նրանց անհատական հոգեբանական առանձնահատկությունները, պահանջմունքները: Համագործակցային մեթոդներով անցկացված դասը հանգեցրեց այն եզրակացությանը, որ ուսումնական գործընթացում անձնակենտրոն մոտեցումը հնարավորություն է տալիս հաշվի առնել սովորողների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, պահանջմունքները, դրդապատճառները՝ ուսումնական գործընթացը դարձնելով առավել արդյունավետ և սովորողների մոտ ձևավորելով ու զարգացնելով համագործակցային հմտություններ:

- Համագործակցային ուսուցման տեխնոլոգիային առանձնահատկություններից է այն , որ մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ:
- Այն հնարավորություն է ընձեռում զարգացնելու համագործակցային բազմազան հմտություններ,որոնք անհրաժեշտ են խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:
- Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը աշակերտների մոտ զարգացնում է ստեղծագործական և համագործակցային կարողությունները,ճանաչողական, հետազոտական հմտությունները:

Գրականության ցանկ

1. Մանուկյան Ս. «Նպատակահարույց ուսուցման տեսությունն ու պրակտիկան», Երևան, 1998,

2. Համագործակցության ուսուցում, Ձեռնարկ, Եր., 2006,

3. Վարդումյան և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2003թ,

4. Шакуров Р.Х. Психологические основы педагогики сотрудничества – СПБ: ВИПКПТО, 1994

5. Бородовский Г. А. Извозчиков В. А. Новые технологии обучения: Вопросы терминологии // Педагогика. 1993. N5,